Ս.ՇՏԻԿՅԱՆ

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«Մատյան ողբերգության».** Հայ դասական գրականության ամբողջ պատմության մեջ, քիչ կարելի է գտնել այնպիսի ստեղծագործություններ, որոնք այն հեղինակությունն ու անունն ունենային, ինչպիսին էր մեծահանճար Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը: Ավելի քան 900 տարի, այն հաստատուն կերպով եղել է մեր գրականության ամենանշանակալի գործերից մեկը և միջնադարի հայ ժողովրդի կյանքի հանրագիտարանը: Քննասեր աչքը զգուշությամբ մի կողմ տանելով «Մատյան ողբերգության» պոեմի կրոնական շղարշը, կարողացել է այնտեղ բացահայտել ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական բնութագրության, գրական-մշակութային կյանքի, Նարեկացու անձնավորության ու նրա աշխարհայացքային ըմբռնումների, 10-րդ և նախորդ դարերում Հայաստան աշխարհում տարածված տեսական-փիլիսոփայական զանազան ուղղությունների և նման բնույթի բազում հարցերի վերաբերյալ այնպիսի հանգամանալից և ուշագրավ տեղեկություններ, որոնք հայագիտության համար եզակի ու անփոխարինելի արժեք են ներկայացնում: Այդ կրոնական շղարշն էլ, ի դեպ, շփոթեցրել է միամիտներից շատերին, որոնք «Մատյան ողբերգության» պոեմը խորությամբ քննելու փոխարեն, սահել-անցել են նրա մակերեսով, տեսել են այնտեղ սոսկ «աստծուն փառաբանող աղոթքներ» կամ «կրոնական թանձրածանր մտայնություն» և ըստ այդմ՝ պոեմն էլ հայտարարել են ընդամենը աղոթագիրք: Ծիծաղելի այս կարծիքին փոքր-ինչ լրջորեն ենք անդրադառնում այն պատճառով միայն, որովհետև նրա մեկ-երկու մնացուկներին հանդիպում ենք անգամ մեր օրերում, և որի աննկուն ջատագովը, փիլիսոփայական գիտությունների ոչ անհայտ մի դոկտոր, իր գրավոր և բանավոր ելույթներում սարսափահար «ուշադրություն էր հրավիրում» այն «արտառոց» փաստի վրա, որ «կոմունիստական հասարակության կառուցման արդի էտապում» Հայաստանում սկսել են զբաղվել աղոթագիրք հրատարակելով…

1960 թ., Հայաստանի պետական հրատարակչությունն իրագործեց գովելի մի մտահղացում. Վարագ Առաքելյանի խմբագրությամբ և Մկրտիչ Մկրյանի առաջաբանով, Մկրտիչ Խերանյանի՝ գրաբար բնագրից կատարված աշխարհաբար

չափածո թարգմանությամբ, լույս ընծայեց Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը: Այսպիսով տեղի ունեցավ այդ ստեղծագործության 53-րդ /չհաշված օտար լեզուներով կատարված թարգմանությունները, զանազան հոդվածների արտատպումները/ վերահրատարակությունը:

\+ + +

Նարեկացու ամբողջ ստեղծագործությունն ընդհանրապես և անմահ «Մատյան ողբերգության» պոեմը հատկապես, անընդմեջ ուսումնասիրության առարկա լինելուց բացի, հենց սկզբից եղել է հայ թարգմանիչների ուշադրության կենտրոնում: Պարբերականներում՝ տարբեր առիթներով, ուսումնասիրություններում՝ որպես հավելվածներ, այս կամ այն ժողովածուներում՝ մեծ և փոքր հատվածների ձևով և այլն, մշտապես զետեղվել են Նարեկացու «Մատյանից» կատարված զանազան թարգմանություններ, բնագրագիտական ճշգրտումներ, խրթին հատվածների մեկնաբանություններ: Այս ամենն իրենց զարգացումը գտան 1902 թ. Պոլսում, Քասիմի /Միսակ Գոչունյան/, 1926 թ. Կահիրեում Թորգոմ Գուշակյանի /նույնը՝ 1931 թ./, 1926 թ. Պոլսում Գարեգին Տրապիզոնցու /նույնը՝ գրաբար բնագրի հետ զուգահեռ, 1948 թ. Բուենոս-Այրես/ և մի քանի այլ արդեն ամբողջական թարգմանություններում, որոնք և հատկապես նշվածները, դասվում են հաջողվածների շարքին: «Մատյանին» նվիրված քննադատական աշխատությունների թագն ու պսակը հանդիսացավ 1801 թ. Վենետիկում հրատարակված Գաբրիել Ավետիքյանի «Մեկնություն կամ լուծումն Նարեկայ» աշխատությունը /վերահրատարակված 1827 և 1859 թթ., առավել հայտնի է «Նարեկլուծ» անվամբ/, որտեղ հեղինակը միայն իրեն հատուկ մանրամասներով բացատրել է Նարեկացու գլուխգործոցում եղած բոլոր խրթին ոճերը, անդյուրամարս դարձվածքներն ու արտահայտությունները: Այս համառոտ թվարկումը կատարում ենք ոչ թե գրախոսվող «Մատյանի» թարգմանության մեծարժեք նշանակությունը նսեմացնելու, այլ արձանագրելու այն, որ արդեն փխրեցված էր պոեմի աշխարհաբարացման կարծր հողը, և ընդգծելու, որ Խերանյանի թարգմանությունը իր մեծ նախորդների կատարած աշխատանքի բնականոն շարունակությունն է:

«Մատյանի» խերանյանական թարգմանության հաջողված գլուխներից պետք է համարել Բան ԼԲ-ն, Խ-ն, ԽԱ-ն: Հանրահայտ է, որ հիշյալ գլուխները ոչ միայն ամենաբարդն են արտահայտած իմաստներով, այլև տառապում են անհասկանալիության հասնող կնճռոտ խրթնաբանություններով: Այս է պատճառը, որ բոլորովին

վերջերս, կրկին անգամ առաջարկվեց այդ գլուխների միանգամայն նոր <<հայե-ցումն>> ու մեկնությունը[1]: Աշխատանքին ձեռնամուխ լինելով մեծ բարեխղճությամբ և ուշադրությամբ, Խերանյանը կարողացել է հիրավի հաջողությամբ իր ավարտին հասցնել գործը: Թարգմանչին օգնել է գրաբարի փայլուն իմացությունը, որը որոշ դեպքերում /տես Բան Դ, ԺԸ, ԻԹ, ԼԱ և այլն/ հիացնում է ընթերցողներին: Չի կարելի, օրինակ, կարդալ ԺԹ, ԻԵ, ՁԳ, ՀԱ գլուխները և կրկին ու կրկին խանդաղատանք չապրել օրինակելի թարգմանությունների առթիվ: Իսկ նշվածները «Մատյան ողբերգության» այն հատվածներն են, որոնք շատ են տանջել այդ պոեմի՝ աշխարհաբար լեզվին փոխադրելու գործով զբաղվող մեր հին ու նորօրյա գրական մշակներին և ինչքան ասես տարաձայնությունների տեղիք են տվել[2]: Որպես ապացույց, բերենք մի հատված Բան ՀԱ-ի երկրորդ մասից:

Իսկ ես անպետք եմ ամեն ինչի մեջ,
Եվ պարսավելի, որքան հնար է ասել խոսքերով,
Նիրհում եմ, մինչդեռ արթուն եմ,
Թմրում եմ, մինչդեռ զգաստ եմ երևում,
Բարեպաշտությանս մեջ գայթակղվում եմ,
Եվ վրիպում՝ մինչդեռ աղոթում եմ:
Լույսի հետ մի մաս խավար եմ կցում,
Օշինդր եմ խառնում քաղցր համի հետ,
Ծաղկում եմ ու չեմ տալիս պտուղ,
Ասում եմ ու չեմ գործադրում,
Խոստանում եմ ու չեմ կատարում:
Ուխտում եմ ու չեմ վճարում,
Կարկառում եմ ձեռքս ու ետ քաշում դարձյալ,
Ցույց եմ տալիս ու չեմ ընծայում,
Մոտեցնում եմ ու չեմ մատուցում:

Բացի այս, թերևս ոչ մի ստեղծագործության թարգմանություն, միջավայրի ու ժամանակաշրջանի այնպիսի մի կատարյալ իմացություն չի պահանջում, որքան «Մատյան ողբերգության» պոեմը: Ի տարբերություն մեր մյուս դասականների և ի

[1] Տես «Փորձ մը Նարեկյան… նոր թարգմանության», «Բազմավեպ», 1951, N 7-8:
[2] Հորո, Նարեկը և իր աշխարհաբար թարգմանությունը, Պոլիս, 1903:

տարբերություն հենց իր՝ Նարեկացու մյուս գործերի, նա իր գլուխգործոցը շարադրում է՝ լռելյայն և որպես ինքնին հասկանալի իրողություն ելնելով այն բանից, որ իր ընթերցողներն արդեն լավ գիտեն մեր միջնադարն իր բոլոր հասարակական, քաղաքական և գրական-պատմական երևույթներով: Առանց այդ իմանալու ձեռնամուխ լինել «Մատյանի»-ի թարգմանության աշխատանքներին, նշանակում է անվերապահորեն հաստատուն կերպով տապալել գործը: Եվ շատ իրավացի էր Արշակ Չոպանյանը, երբ գրում էր, որ Նարեկի «աշխարհաբարացման գործին հարկ է մերձենալ մինչ այդ թերևս տարիներ տևած» գրական-բանասիրական քրտնաջան ուսումնասիրություններից հետո միայն[3]: Եվ կարդալով Խերանյանի թարգմանությունը, վստահ կարելի է ասել, որ թարգմանիչը բարեխղճորեն նկատի է ունեցել այդ հանգամանքը: Այդ մասին են վկայում պոեմի Զ, ՀԳ, ՀԶ, Ղ և այլ գլուխներ, որոնք ամեննին էլ այդքան հաջողված և ճշգրիտ չէին լինի, եթե թարգմանիչը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրած չլիներ այն ժամանակաշրջանը, ուր ապրում և գործում էր Նարեկացին:

Ոչ պակաս հաջողությամբ է կատարված Նարեկացու վերացական մտածողության հատուկ արտահայտությունների թարգմանությունը: Ինչպես հայտնի է Նարեկացին, բացի գրաբար, հաճախ նույնիսկ գիտակցաբար և դիտմամբ բարդ շարադրելուց բացի, չի ունեցել պարզ առարկայական մտածողություն: Դրա պատճառը ստեղծագործության համար ընտրած վերացական և հաճախ էլ կրոնա-միստիկական շաղախ ունեցող նյութն է, որն էլ իր հերթին պահանջում է նույնպիսի վերացական, աբստրահող մտածողություն. մի բան, որի համար նրան ի դեպ, մեղադրել չի կարելի: Այս աբստրահող մտածողության արդյունքը միայն հեղինակին հատուկ, բազմաթիվ անդյուրըմբռնելի մտքերն են, որոնք մինչև վերջ հասկանալու և առավել ևս թարգմանելու համար անհրաժեշտ է իրոք մեծ հմտություն: Իհարկե չէինք ասի, որ այդ բանը միշտ և կատարյալ իմաստով հաջողվել է թարգմանչին, և որ նա ամենուրեք կարողացել է մնալ հարկավոր բարձրության վրա: Բայց այն, ինչ արված է, ինչ ներկայացված է ընթերցողներին, լիուլի հիմք է տալիս հայտարարելու, որ Խերանյանը հիմնականում կարողացել է հաջողության հասնել: Այս տեսակետից առանձնապես պետք է նշել, պոեմի Լ, ԼԵ, ԾԱ գլուխները, որոնք կարող են օրինակ

---

[3] Տես <<Ծաղիկ>> , 1895, №№ 4, 5, («Նարեկացին»)

հանդիսանալ Նարեկացու վերացական՝ դժվարամարս մտածողության, հետևաբար և հիանալի աշխարհաբար թարգմանության: Մեր ասածն ապացուցելու համար, ահա մի հատված Բան ԼԵ-ի «Գ» հատվածից:

Քո աշխարհաստեղծ բերանի օրհնյալ շրթունքների
Աստվածեղեն անձրևների կաթիլը կենարար,
Որպես բանալի՝ լսելիքիս դռանը մոտեցրու,
Որով խորամանկ բանսարկու օձի թույնը վերացնես ու բժշկես դու:
Քո ամենակալ ձեռքով բռնիր շարժվող գործիքն իմ խոսողության,
Եվ ազդիր նրան ձայնի զորություն:
Դու, որ տալիս ես լեզու բոլորին՝ ընտիր խոսելու
Որպեսզի ես էլ, դաստիարակվելով պատշաճապես
Չլինի, որ մեր նախահոր նման հանդուգն խոսելով՝ զրկվեմ քո լույսից,
Եվ անբանության դատապարտվեմ՝ որսողից քշված:
Բաց բժշկարանիդ կենաց վարդապետարանը, հզոր և գթած,
Որպեսզի մեր մեջ կորուսչի ցանած, մշակած բոլոր որոմները չար,
Կամքիդ մանգաղով ընդհուպ արմատից հնձես ու թափես, և այլն:

Նարեկացու հանճարեղ «Մատյանի» աշխարհաբար թարգմանությունն, այսպիսով, բռնել է իր քննությունը: Դրա մասին է խոսում, թեկուզ, այն ջերմ ընդունելությունը որին նա արժանացել է ընթերցողների և պարբերական մամուլի կողմից: Այդ թարգմանությունն է՛լ ավելի հաջողված տեսնելու համար է, որ կամենում ենք սկզբունքային և բնագրագիտական բնույթի մի քանի դիտողություններ անել:

++++

Նարեկացին մեր այն հեղինակներից է, որին հրատարակել առանց որևէ առաջաբանի անպայման սխալ կլիներ, և ճիշտ է վարվել Պետական հրատարակչությունը, երբ գրքին կցել է պրոֆ. Մկրտիչ Մկրյանի «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության պոեմը» խորագիրը կրող շահեկան առաջաբանը: Առաջաբանում արծարծված գրականագիտական, տաղաչափական, պատմա-հասարակական մի շարք կարևոր խնդիրներից բացի, որոնք վեր են հանված մասնագիտական մեծ հմտությամբ, անհրաժեշտ էր, որ այնտեղ արծարծվեին միայն պոեմի հետ առնչվող հայագիտական-բանասիրական բնույթի հարցեր ևս, որտեղ գիտական պատասխան տրվեր այն մի շարք հարցադրումներին, որոնք «Մատյանը» կարդալուց հետո

անպայմանորեն ծագում են ընթերցողների մոտ, և որոնց վերաբերյալ նա ոչինչ չի գտնելու իրեն բավարարող: Օրինակ. հանրահայտ ճշմարտություն է, որ գրախոսվող պոեմը պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին: Սակայն դրանով հանդերձ ինքը՝ Նարեկացին նշում է, որ ողբերգությունների մատյանը գրելիս, իրեն գործակից է ունեցել Հովհաննես եղբորը, որին նա հորջորջում է որպես մեծափառ և բարձրապատիվ վանական: Կամ. Բան Է-ում հեղինակը խոսում է իր երկրային բազմաթիվ հակառակորդների մասին, ում նա անվանում է ընտանի թշնամիներ, ովքեր մշտապես հալածում ու տվայտանքներ են պատճառում նրան: Ապա. Բան ՂԷ-ում խոսելով իր պոեմի մասին, հեղինակը գրում է, որ իր աշխատանքն արդեն ավարտվում է /«Եվ ահա, քանզի այս ողբերգության կտակը համեստ հասել է իր ավարտին…»/, և որ ինքն այլևս շարունակելու միտք չունի: Դրանով հանդերձ պոեմը շարունակվում է ևս վեց գլուխ և ավարտվում է միանգամայն անսպասելի ու հանկարծակի՝ ինչը բազմիցս նշել են բանասերները: Եվ վերջապես՝ հայտնի է, որ «Նարեկը» գրվել է չափածո և մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանի ամենամեծ ծառայություններից մեկն այն էլ, որ նա քննաբար զարգացնելով դեռ Արսեն Բագրատունու հարևանցիորեն ասված այս տեսակետը, հիանալիորեն կարողացել է ապացուցել այդ: Սակայն Մանուկ Աբեղյանը նշում, էր որ «Մատյանում» ամբողջ գլուխներ և գլուխների մեջ ամբողջ հատվածներ կան, որոնք հայոց լեզվի տաղաչափության և ոչ մի կանոնին չեն ենթարկվում, դուրս են մնում միջնադարյան մեր պոեզիայի բնորոշ և թելադրող սկզբունքներից և հավանաբար գրվել են արձակ[4]: Իսկ աշխարհաբարի թարգմանության մեջ առավել հստակ են երևում այն հատված-ները, որոնք դժվար թե չափածո գրված լինեին /տես հատված Բան ՀԲ «ա»-ն/: Արդ՝ ո±վ է Գրիգոր Նարեկացու եղբայր Հովհաննեսը և ինչ մասնակցություն է ունեցել հիշյալ պոեմի ստեղծման գործում: Իրեն մշտապես հալածող այդ ի±նչ երկրային հակառակորդներ է ակնարկում Նարեկացին, հետագայում ներմուծվա±ծ են արդյոք վերջին վեց գլուխները թե± ոչ, ամբողջ «Մատյա±նն» է գրվել չափածո, թե± նրա այս կամ այն մասը և ո՞ր մասը,- այս և նման կարգի շատ հարցերի պետք է պատասխաներ մեր կողմից՝ վերևում նշված բնույթի լրացումը առաջաբանում,

---

[4] Աբեղյան Մ., Ս. Գրիգոր Նարեկացի, «Ազգագրական հանդես», 1917, գիրք 26-րդ, էջ 85-136

որպիսին դժբախտաբար չկա: Հասկանալի է, որ այս հանգամանքը շատ է դժվարացնում Նարեկը մինչև վերջ հասկանալու գործընթացը:

«Մատյանի» աշխարհաբար թարգմանության՝ թարգմանչի ընդամենը մեկ էջանոց առաջաբանում, որն ի դեպ գրված է շատ անխնամ և թափթփված, կարդում ենք հետևյալը. «Պոեմի ՀԵ, ՂԲ, ՂԳ գլուխներն ամբողջությամբ, ինչպես և առանձին ենթամասեր ԼԳ, ԼԴ և ԻՉ գլուխներում ունեն զուտ դավանաբանական և կրոնա-փիլիսոփայական բնույթ ու բովանդակություն, որոնք իրենց ոճով ու ոգով անհարիր լինելով ընդհանուր պոեմի հետ, ՄԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ[5] հազիվ թե հանճարեղ հեղինակի գրչին պատկաներ: ՈՒստի և մենք վերոհիշյալ գլուխներն ու ենթամասերը դուրս թողեցինք մեր թարգմանությունից»:

Նախ շտապենք ասել, որ վերոհիշյալ գլուխների հարազատության հարցը հայ բանասիրությանը հետաքրքրել է շատ վաղուց, և այն որպես «մեր կարծիք» ներկայացնելը, մեղմ ասած՝ սխալ է: Քննության առնելով նշված գլուխների լեզվա-ոճական առանձնահատկությունները և նրանց արտահայտած իմաստները, առաջին անգամ նրանց անհարազատ լինելու մասին գրել է Գաբրիել Ավետիքյանը, հետագայում բերելով նորանոր փաստեր այդ միտքը հաստատում է Գարեգին Զարբհանալյանը, և վերջապես այդ ամենը՝ ամբողջացված և գիտական տեսքի բերված, հանդես է գալիս «Նարեկացին և Նարեկը» ուսումնասիրության մեջ[6]: Սակայն ո՛չ նշված բանասերները, և ո՛չ էլ Նարեկացու մեր մյուս հրատարակիչները, արձանագրելով հանդերձ հիշյալ գլուխների հեղինակային կասկածելիության հանգամանքը, իրենց իրավասու չեն համարել դրանք դուրս թողնել թարգմանություններից, կամ հրատարակություններից: Հարց է ծագում. չափից ավելի իրավունքներ չի± վերապահել արդյոք իրեն թարգմանիչ Խերանյանը, որ գրչի մի հարվածով այդ գլուխներն արտաքսել է գրախոսվող «Մատյանից», փոխանակ դրանց գոնե ծանոթագրություններում զետեղելու: Եվ ինչպե±ս է պատահել, որ այդ տարօրինակ «խմբագրման հետ» համաձայնել է հատորի պաշտոնական խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր Վարագ Առաքելյանը[7]:

---

5 Այստեղ և հետագայում ընդգծումները մերն են:

6 Տես «Բազմավեպ», 1900, N 10-11

7 Այս սկզբունքով առաջնորդվելու դեպքում պետք էր Ագաթանգեղոսից դուրս գցվեր նրա երկրորդ՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» գլուխը, որը վաղուց էր կասկածների տեղիք տվել, Խորենացու երկրորդ գրքի ՁԳ գլուխը, որի հետո ներմուծված լինելը փայլուն կերպով ապացուցեց Ստ.

Ուշադրությունից չի վրիպում նաև գրախոսվող գրքի ծանոթագրությունների հարցը: Հայտնի է, որ իր ասած մտքերն ավելի ռելիեֆ դարձնելու, գործածած պատկերների ու համեմատությունների իմաստները բացահայտելու համար, Նարեկացին բազմիցս դիմում է Աստվածաշնչի օգնությանը, հաճախ նույնիսկ՝ խոսում ու մտածում է այդ գրքի լեզվով. մի բան, որ անպայմանորեն հարկավոր էր մանրամասնորեն ծանոթագրել: Խերանյանի այն վկայությունը, որ իր թարգմանությունը ծանոթագրելիս ձեռքի տակ է ունեցել Թորգոմ Գուշակյանի և Գարեգին Տրապիզոնցու՝ նույն պոեմի թարգմանության առթիվ տրված ծանոթագրությունները, իհարկե գովելի է ու խրախուսելի: Բայց դրանով հանդերձ, նա վրիպել է մի շատ կարևոր հարցում, որը և ճակատագրական նշանակություն է ունեցել գրախոսվող գրքի համար: Թորգոմ Գուշակյանն ու Գարեգին Տրապիզոնցին իրենց ծանոթագրությունները կազմելիս նկատի են ունեցել այն ընթերցողներին, ովքեր ԱՐԴԵՆ ՀԻԱՆԱԼԻ ԳԻՏԵՆ Աստվածաշունչը, հետևաբար նրանց անհրաժեշտ է սոսկ հիշեցնել այս կամ այն փաստը, եղելությունը, դրվագը: Այսպիսի մոտեցումը հասկանալի է ու պատճառաբանված, որովհետև հանրահայտ իրողություն է, որ արտասահմանյան բոլոր դպրոցներում և ուսումնական հաստատություններում մեկից ավելի անգամ է ուսումնասիրվում Աստվածաշունչը: Կազմելով իր ծանոթագրությունները, Խերանյանը պարտավոր էր նկատի ունենալ մեր ընթերցողին, ով ԲՈԼՈՐՈՎԻՆ ՉԳԻՏԻ Աստվածաշունչը, հետևաբար նրան անհրաժեշտ էր հանգամանորեն ծանոթացնել այն բոլոր փաստերի ու դրվագների հետ, որը զանազան առիթներով հիշատակում է Նարեկացին: Այդ բանը, դժբախտաբար, չի արվել, հետևաբար «Մատյանի» բազմաթիվ հատվածներ ու պարբերություններ անհասկանալի են մնում մեր ընթերցողների մեծագույն մասի համար: Այսպես օրինակ. հենց առաջին գլխի առաջին հատվածում, իր հառաչանքները երկինք առաքելու մասին խոսելով, Նարեկացին գրում է.

Այլ ընդունիր այն կամովին, ինչպես խունկն հաճոյական,
Որ մի ժամանակ բուրեց Սելոցի խորանի մեջ այն,
Որը նոր շուքով վերանորոգված՝ Դավիթը կանգնեց,
Հանուն զերեդարձ այն տապանակի,
Որ նման է իմ կորուսյալ հոգու վերստին գյուտին:

---

Մալխասյանցը: Վարդան Այգեկցու «Աղվեսագրքում» եղած այն առակները, որոնք, ինչպես ապացուցել է պրոֆ. Ն. Մառը, գալիս են Եզովպոսից… այդպես ո՞ւր կհասնեինք:

Ծանոթագրելով այս հատվածը, Խերանյանը գրել է միայն հետևյալը. «Բ. Թագ. Զ. 17»: Կարիք չկա մեկնաբանելու անգամ, որ ոչինչ չասող այս նշումը ամենևին էլ հասկանալի չի դարձնում բերված քառյակի իմաստը ընթերցողների համար և, հետևաբար, «ծանոթագրությունն» իր նպատակին չի ծառայում: Հարկավոր էր գոնե համառոտակի նշել, որ ակնարկվում է Դավթի այն արարքը, երբ նա իսրայելցիների բանակի հետ, խլում է Հուդայի մոտ գերված տապանակը, բերում է իրենց բնակատեղին՝ Սելով և տեսնելով տեղի հին տաճարն ավերված՝ նորն ու ավելի շքեղն է կառուցում տապանակի համար: Երկրորդ գլխի առաջին հատվածում կարդում ենք.

Կշտամբված եմ ես ավելի քան Ծուրը,
Եվ Ծայդանից ավելի տարամերժված,
Խորթաբարո ավելի քան Գալիլան,
Եվ քան անհավատ Կափառնայումն աններելի:

Իսկ ծանոթագրության մեջ թարգմանիչը նշել է. «Մատթ. ԺԱ. 23-24»: Ի±նչ պետք է հասկանա ընթերցողն այս ծանոթագրությունից և հետևաբար այս քառյակից: Այնինչ անհրաժեշտ էր նշել, որ ակնարկը վերաբերում է Ծուրի՝ ընկերների կողմից նրան արված ծանր կշտամբանքներին, որովհետև նա լքել էր իր եղբորը, Ծայդանին՝ քանի որ վերջինս չնչին ու աննշան մի վեճի պատճառով հեռացել էր իր համայնքից, Գալիլայից, և բարոյական ոչ մի անջրպետ չճանաչելով կենակցում էր առաջին իսկ պատահածների հետ և Կափառնայումին, որը Քրիստոսին տեսնելուց հետո անգամ չէր հավատում, որ նա Աստծո որդին է և համառորեն շարունակում էր սպասել նրա գալստյանը: Մեր կարծիքով, այսպիսին պետք է լինեին ծանոթագրությունները, որոնք, թե՛ ճիշտ կկատարեին իրենց համար նախորոշված գրական-բանասիրական դերը, և թե՛ կօգնեին «Մատյանը» կարդացողներին, այն մինչև վերջին ստորակետը հասկանալու համար: Կարելի է բերել ինչքան ասես հատվածներ, որոնք ծանոթագրված չեն վերոնշյալ ձևով, հետևաբար ընթերցողների համար անհասկանալի պիտի մնան: Էլ չենք ասում այն մասին, որ պոեմում առկա շատ կարևոր եղելություններ, ընդհանրապես ծանոթագրված չեն /Բան Զ.բ, Բան Է, ա, Բան Թ, ա, Բան ԺԱ, բ, Բան ԺԲ, ա, Բան Ի, ա և այլն/:

Եվ վերջապես, չնայած թարգմանիչն իր առաջաբանում փորձում է հիմնավորել թարգմանության վերջում զետեղված 4 թերթանոց բառարանի գոյության փաստը

/«…անհրաժեշտ համարենք նաև մեր թարգմանության վերջում զետեղել փոքրիկ բառարան»/, այնուամենայնիվ այն ոչնչով չի պատճառաբանվում: Իհարկե ոչ մի առարկություն չէր կարող լինել, եթե թարգմանության վերջում լիներ, ասենք, Նարեկացու օգտագործած Աստվածաշնչային անունները մեկնաբանող բառարան, որի կարիքն անպայման զգացվում է: Բայց Խերանյանը մեզ ներկայացնում է Նարեկացու գրաբար բառերից մի քանիսի աշխարհաբար բացատրությունները, որոնք նա կարող էր օգտագործել բուն բնագրում և բառարանի կարիք չէր զգացվի: Ի±նչ կարիք կար, օրինակ, թարգմանության ժամանակ պահպանել *ազազուն, ամբարհավան, այսահար, անըստգյուտ, բարձրահոն, զենել, զվարթուն, ըմբերանել, թարմատար, լրթագույն* և նման բազմաթիվ այլ բառեր, իսկ բառարանում տալ նրանց *ցամաքած, ամբարտավան, դիվական, անպարսավ, մեծամիտ, մորթել, հրեշտակ, պապանձեցնել, անպիտան, կապտագույն* բացատրությունները, երբ վերջիններս նույնիսկ վանկերի թվով չեն տարբերվում իրենց գրաբար ձևերից, հետևաբար հեշտությամբ կարող էին տեղ գտնել թարգմանության մեջ և դրանով իսկ հեշտացնել բառարանի օգնությանը անընդհատ դիմելու ոչ հաճելի գործը:

++++

Մի քանի խոսք էլ թարգմանական անճշտությունների մասին և դրանով ավարտենք:

Ասվեց արդեն, որ «Մատյանի» հայերեն թարգմանությունը ընդհանուր առմամբ հաջողված է և կարող է ամենալուրջ ու պահանջկոտ քննությանը դիմանալ: Այդ ամենով հանդերձ՝ սպրդել են մի շարք սխալներ, անհաջող ձևակերպումներ, ոչ այնքան հարթ նախադասություններ, որոնք ճիշտ է, որակ չեն կազմում, բայց որոնց մասին չի կարելի չխոսել: Ստորև բերում ենք դրանցից առավել բնորոշները:

«Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» Նարեկացու պոեմի գլուխների հանրահայտ վերնագիրը: Թարգմանված է «Սրտի խորքերից խոսք Աստծո հետ», որի հետ դժվար է համաձայնել: Նարեկացին ոչ թե խոսում է Աստծո հետ, այլ իր հառաչանքներն է հղում առ Աստված: Ավելի լավ և ճիշտ կլիներ «Սրտի խորքերից խոսք առ Աստված»:

«Ձայն հառաչանաց հեծության սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայե տեսօղդ գաղտնեաց» /Ա. ա, 5/: Թարգմանված է «Սրտիս ողբաձայն հառաչանքների աղաղակն ահա ԴԵՊ ԵՐԿԻՆՔՆ Ի ՎԵՐ՝ քեզ եմ ընծայում, գաղտնատես ԱՍՏՎԱԾ»: Նախ՝

ինչպես ակնհայտ է, ընդգծված բառերը  բնագրում չկան, և դրանք ավելացրել է թարգմանիչը. ի դեպ այդպիսի անհարկի հավելումների հանդիպում ենք բազմիցս: Եվ ապա, թարգմանությունն ընդհանրապես հաջող չէ: Պիտի լիներ «Սրտիս հառաչանքների ձայնը՝  ողբագին աղաղակներով հանդերձ, քեզ եմ վերընծայում, ով գաղտնատեսդ»:

«Այլ  իբր զբուրեալ խունկն հաճոյական ի խորանին Սելովայ, զոր Դավիթն կանգնեալ նորգեաց տապանակին հանգստեան ի  գերութենեն դարձելոյ» /թարգմանությունը տես վերևում, Ա, ա, 20-25/: Նարեկացին կամենում է ասել, որ իր աղոթքների փունջը թող ընդունելի լինի այնպես, ինչպես Սելովի խորանում բուրող խունկի հաճելի հոտը, այն խորանի, որը կանգնեցրել է Դավիթը: Իսկ աշխարհաբար թարգմանությունն այդ իմաստը չի պարունակում:

«Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն աստված յողաւորական շրթամբք կարդաս» /Բ, ա, 2/: Թարգմանված է «Քանզի  ՄԱՐՄՆԱՎՈՐ ՇՈՒՐԹԵՐՈՎ ահա ուղերձ ես կարդում բարձրյալ աստծուն»:  Թարգմանությունն ընդհանրապես ճիշտ է, բայց ընդգծված արտահատությունը թե՛ տգեղ է /շրթունքը միշտ էլ մարմնական հասկացություն է և ուրիշ տիպի շրթունք չի  լինում/, և թե՛ դժվար հասկանալի: Ավելի լավ կլիներ «Պիղծ շուրթերով» կամ «Մեղավոր բերանով», քանի որ գրաբար արտահայտությունը նաև այդ իմաստն ունի, և այդ երկու ձևերն էլ Նարեկացին օգտագործում է մեկից ավելի անգամ:

«Անհամառօտ յոյս, երկար տեսողություն, անզղջական տուրք» /Գ, ա. 25/: Աշխարհաբար թարգմանված է գրեթե նույն  ձևով, որը ոչ միայն ճիշտ չէ, այլև անհեթեթության տպավորություն է թողնում: Իսկ դա առաջացել է այն պատճառով, որ թարգմանիչն ածականները չգիտես ինչու չի  թարգմանել: «Հարատևող հույս հավիտենատես, տուրք ցանկալ /տուրք, որ զղջանք կամ  ափսոսանք չի առաջացնում/»: Ընդհանրապես՝ Բան Գ-ի ա հատվածը  «Մատյանի» ամենաբարդ մասերից մեկն է և  հարկավոր էր այն առավել խնամքով թարգմանել:

«Այլ զի պատճառ  իմն առցես, զփոքրս աղերս՝  մեծիդ փրկանաց» / Գ, ա, 45/: Թարգմանվել է.  «Այլ իմ փոքրիկ աղերսը թող, որ դառնա  մի պատճառ քո մեծ փրկության», որն ուղիղ հակառակ իմաստն է արտահայտում: Նարեկացու աղերսներով չէր, որ  Աստված պիտի փրկվեր, և Աստծու անպարփակ իշխանությունն իր վրա ընդունող Նարեկացին այդպիսի անպարկեշտ բան չէր կարող ասել: Նրա

միտք այսպիսինն է. իմ այս փոքրիկ աղերսը թող, որ պատճառ դառնա քեզ, ո՛վ մեծդ, ինձ փրկելու համար:

Բան Գ-ի «բ» հատվածն ասում է. «Եւ քանզի առ ամենայն հասակ տնկեցեալ յերկրի ազգ բանականաց» /«Եւ քանի որ երկրի վրա բանական ազգերի ամեն հասակներն էլ հանդիպում են»/ տողով, որը սակայն առանց որևէ պատճառաբանության թարգմանությունից դուրս է թողնված:

«Եղիցի հոգի քո խառնեալ ի սա» /Գ, դ, 134/: Թարգմանված է շատ խաղաղ նախադասությամբ. «Եվ թող քո հոգին խառնվի սրան», իսկ գրաբար ձևն ուժեղ կոչական շեշտ ունի: Ավելի լավ կլիներ «Եվ թող քո հոգին լինի սրան խառնված»: Ընդհանրապես Բան Գ-ի «դ» հատվածը շատ խառնափնթոր է թարգմանված:

«Ոչ դիմակօք կեղծաւորելի, ոչ առ երեսս՝ բանիւք մատչելի» /Դ. Ա, 14/: Նարեկացու միտքն այսպիսին է. ոչ կարող եմ դիմակ հագած մարդու նման կեղծավորություն անել, և ոչ էլ գեղեցիկ խոսքերով շողոքորթություն /գուցե երեսպաշտություն/ անել: Այս միտք աշխարհաբար թարգմանության մեջ ընդհանուր առմամբ պահպանված է, բայց արտահայտված է շատ անորոշ ու տարտամ: Էլ չենք խոսում այն մասին, որ Նարեկացին ինչպես այստեղ, այնպես էլ հետագայում մի քանի անգամ անդրադառնում է դիմակ հագած մարդկանց, նշում է, որ նրանք ժողովրդի մեջ զանազան խաղեր են ցուցադրում, որ կարողանում են արտաքին ձևերով ու շարժումներով իրենց հոգին բացահայտել և այլն: Մտածելու տեղիք տվող այս արտահայտություններն անպայման անհրաժեշտ էր ծանոթագրել:

«Ոչ ստեղծանիլն երբեք յարգանդի, և ոչ նկարիլն ի յորովայնի», /Դ. բ, 38/: Թարգմանված է. «Ոչ ստեղծվել երբեք արգանդի մեջ, ՁԵՎԱՎՈՐՎԵԼ որովայնում»: Ընդգծված բառը պետք է ժխտական լիներ:

«Ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ» /Ե.ա, 7/: Թարգմանված է. «ՈՐ ՍՏՈՒՄ ԵՄ ԱՄԵՆ ու ՈՉ ՄԻ ԲԱՆՈՎ ճիշտ չեմ խոսում»: Նարեկացու այս տողերը մեկնաբանվում են նախորդների օգնությամբ, որտեղ նա նշում է, որ ինքը հիմարությունից, ինչպես արբեցուցիչ գինուց մտաթափ է եղել: Դրա հետևանքով էլ ինքն ամեն անգամ սուտ է խոսում և ոչ մի բանի մասին ճիշտ տեղեկություններ տալ չի կարողանում: Այս իմաստն էլ պետք է լիներ բերված տողում, որը մնում է անհասկանալի, իսկ ընդգծված արտահայտությունները անհաջող են:

«Հոգեկան խիթի ծանրությունն ամբողջ զզվանք պատճառող մատնամխությամբ Ի ԴՈՒՐՍ ՉՓՍԽԵՄ» /Զ. ա, 10/: Գրաբար բնագիրն այստեղ ունի անտանելի մի նախադասություն «…Հոգեկան խիթոյս իբր տաղտկացուցանողկան հնարաւորութեամբ մանտամուխ զզվանօք փսխել»: Եվ անշուշտ ճիշտ է վարվել թարգմանիչը, երբ գնացել է նախադասությունը պարզեցնելու ճանապարհով: Հարկավոր էր միայն դուրս թողնել ընդգծված բառը /քանի որ, ըստ էության, փսխելը դեպի դուրս է կատարվում/:

«Թիւրեալդ ի յուղղութեանց և զառածեալդ ի մաքրութեանց» /Ը. ա, 23/: Թարգմանված է. «ՎՐԻՊԵԱԼԴ ուղղությունից և ԽՈՏՈՐՅԱԼԴ մաքրությունից»: Նախ՝ ընդգծված բառերի քերականական ձևը աշխարհաբար չէ, երկրորդ՝ նախադասությունը ճիշտ չի կառուցված: Պիտի լիներ «ՈՒղղությունից շեղվածդ և մաքրությունից հեռացածդ»:

«Զպուրակս յոքունց անտառաց՝ շամբից եղեգանց՝ ի հատվածս գոյութեան գրչաց կազմեցից» /Թ. ա, 9/: Ընդհանուր առմամբ թարգմանությունը ճիշտ է, բայց շատ համառոտ, այն է՝ «Կտրեմ եղեգնի անտառները, որ գրիչներ շինեմ»: Պետք է լիներ այսպես. «Եթե կտրեմ անտառների պուրակները և շամբերի եղեգները՝ գրիչներ պատրաստելու համար…: Ավելացնենք նաև, որ գրաբար հատվածը բավականաչափ անորոշ է և ուրեմն, դժվար «բռնվող»:

«Զի եթէ զլիճ մի ծովուց ի յըստակութիւն դեղոյ յեղեղից» /Թ. ա, 11/: Եթե բերված տողը թարգմանենք խիստ հավատարմությամբ, ապա կստացվի հետևյալը. «Եթե ծովերից մեկի լիճը այլագույն /կամ սևագույն/ դարձնելով փոխեմ». մի նախադասություն, որը շատ անորոշ է: Եվ ճիշտ է վարվել թարգմանիչը, երբ կոնկրետ վերարտադրել է այն իմաստը, ինչ ցանկացել է ասել Նարեկացին, այսինքն՝ «Քանզի եթե ես ԾՈՎԵՐԻ ՋՐԵՐԸ մելանի փոխեմ»: Միայն պետք էր պահպանել «ծովաչափ լիճ» արտահայտությունը և ոչ թե գործածել ընդգծված անհաջողը, և այսօրվա ընթերցողին քիչ մատչելի «մելանը» փոխարինել պարզապես «թանաքով»:

«ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ խոսքերովս, ինչպես ՊԱՐՍԱՔԱՐԵՐՈՎ… կքարկոծեմ քեզ» կարդում ենք Բան Թ-ի «գ», 45-ում, այնինչ գրաբար համապատասխան տողը «Վիմօք ձգելոց արձանաց բանից» /«խոսքի վեմերով կքարկոծեմ քեզ»/ իր մեջ ընդգծված երկու բառերն էլ չունի:

Խառնուփնթոր և անկանոն է թարգմանված Բան ԺԲ-ի «բ» հատվածը: Թարգմանիչը գնացել է գրաբար բնագիրը հնարավորինս պարզեցնելու ճանապարհով, սակայն արդյունքը մեծ մասամբ ստացվել է պարզունակություն և վնասել է ամբողջ հատվածը:

«Պատկեր ես դու անպարագիր, անկշռելի որքանությամբ» /ԺԶ, «բ», 15/: Գրաբար նախադասությունն է, սոսկ և միայն աշխարհաբար ուղղագրությամբ գրված, հետևաբար և անհասկանալի: Նարեկացու միտքն այն է, որ աստվածն այնպիսի մի էություն է, որի պատկերը գծերով հնարավոր չէ ամփոփել և հետևաբար ձևերի ու գծերի համեմատական չափերից դուրս է մնում: Այս իմաստը կարելի էր երկու տողով թարգմանել, միացնելով հաջորդ տողի հետ, մանավանդ որ հաջորդ տողը դրա հնարավորությունը տալիս է, լինելով նույն մտքի շարունակությունը:

«Ամրափակ խցմամբ համրացոյց արգել հողմն բանսարկուին» /ԺԸ. 62/: Թարգմանված է շատ ճիշտ և գեղեցիկ. «Ամրափակ խցմամբ կապեց, համրացրեց հողմը ԲԱՆՍԱՐԿՈՒԻ»: Ավելի լավ կլիներ, որ ընդգծված բառի փոխարեն լիներ՝ սատանայի, քանի որ Նարեկացու միտքն էլ հենց այդ է:

«Կործանված հոգուս համար կանգնիր նշան վստահության, որ չլինի թե կառուցվելով վհատության կոթող՝ ծածկվածները հրապարակ հանի բարձրաձայն» /ԼԵ. «գ» 62-64/: Ինչպես ակնհայտ է, թարգմանությունից ոչինչ չի հասկացվում, չնայած գրաբար ձևն անհամեմատ մատչելի է: Նարեկացին կամենում է ասել հետևյալը. «Իմ կործանվող հոգուն փրկելու համար հույսից ամուր պատվանդան /կամ արձան/ կանգնեցրու, որպեսզի իմ սրտում հուսահատությունը չկանգնի իբրև կոթող և բարձրաձայն հրապարակի իր ծածուկ մեղքերը»:

«Ասէր ոմն ողոքաւոր, չաւատացեալն պաշտօնար» /ԾԳ. «դ», 72/: Զարմանալիորեն սխալ է թարգմանված՝ «ՈՄՆ ԱՂՈԹԱՎՈՐ, ԿՈՒՌՔԵՐԻ մի պաշտոնատար»: Ընդգծված բառերը գրաբարի ամենևին էլ ճիշտ թարգմանությունը չլինելուց բացի, միայն աղավաղում են իմաստը: Նարեկացին նույնիսկ շեշտված արհամարհանքով խոսում է դարձի եկած մեկի մասին, որն առաջ սպասավորում էր քրիստոնեական հավատի տեսանկյունից անհնար բաներ: Հետագայում նա նշում է դրանցից մի քանիսը. արևը, կայծակը, ջուրը, որոնք իհարկե կուռքեր չեն և նրանց սպասավորն էլ աղոթավոր բառով չի կոչվի:

«Որպես իմաստակի ումեմն» /ԾԵ. «գ» 48/: Չգիտես ինչից ելնելով թարգմանված է «ՄԻ ՀԵԹԱՆՈՍ իմաստասեր»: Նախ՝ ինչպես դժվար չէ նկատելը, ընդգծված բառը գրաբար բնագրում չկա, և երկրորդ՝ կարիք չկա անգամ ասելու, որ բնագրի «իմաստակ» բառը և նրա «իմաստասեր» թարգմանությունը ընդհանուր ոչինչ չունեն իրար հետ:

«Եղծանիմք և ոչ զղջանիմք» /Անդ/: Թարգմանված է թեև ճիշտ, բայց անհասկանալի «ԵՂԾՎՈՒՄ ԵՆՔ, ու չենք զղջում»: Ցանկալի կլիներ, որ թարգմանիչը ընդգծված բառի փոխարեն դներ նրա «հերքվել», «մերժվել», «ապականել», «ժխտվել» իմաստներից որևէ մեկը, որն ավելի մատչելի կդարձներ պարբերությունը:

«Իմ զամաքած ոսկորների ԳԱՆՁԱՐԱՆԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ» /ՁԸ. «գ», 46/: Գրաբար ձևն է՛լ ավելի ճոռոմ է. «Գանձես պահեստի ոսկերացն ցամաքելոց» հեղինակը պարզապես կամենում է ասել գերեզման: Ավելի լավ կլիներ ընդգծված բառերի փոխարեն դրվեր «գերեզման» կամ «գերեզմանոց», և պարբերությունը ավելի հասկանալի լինելուց բացի, հեշտությամբ մատչելի կդառնային նաև նախորդ մի քանի տողերը:

Եվ վերջապես, «Անդնդոց մատնին հրեշտակք օտարին» /ՂԱ. «ա» 17/: Թարգմանված է «Անդունդ են գլորվում ՀՐԵՇՏԱԿՆԵՐՆ ՕՏԱՐԻ», որը թեև քերականորեն ճիշտ է, բայց անհասկանալի է մնում ընթերցողների համար: Ընդգծված արտահայտությամբ, իսկ այլնայլ տեղերում «Հեռու ի ճշմարտութիւն», «Խորթացեալքն», «Մենամոլքն», և այլ ձևերի ներքո Նարեկացին նկատի ունի դևերին, չարքերին, սատանաներին: Այս իմաստներից մեկն ու մեկն էլ պետք է դրվեր թարգմանության մեջ, որից ամբողջ տողն ավելի կշահեր:

Սրանք են մեր ունեցած մի քանի դիտողությունները, վերջերս հրատարակված «Մատյան ողբերգության» պոեմի՝ Մկրտիչ Խերանյանի կատարած աշխարհաբար թարգմանության կապակցությամբ: Ցանկալի կլիներ, որ պոեմի վերահրատարակության ժամանակ նկատի առնվեին դրանք:

## ՏԱՂԵՐ

Հայպետհրատի հրատարակությամբ 1957 թ. լույս ընծայվեց միջնադարի հայ խոշորագույն դեմքերից մեկի՝ Գրիգոր Նարեկացու բանաստեղծությունների լիակատար ժողովածուն «Տաղեր» խորագրի ներքո, որը նշանակալից իրադարձու-

թյուն է մեր գրական-հասարակական կյանքում: Նշանակալից է այն պատճառով, որ մեզանում ավելի ու ավելի հաճախ է զգացվում անցյալի մեր գրականության հանդեպ նկատվող, մեղմ ասած՝ զգույշ մոտեցումը: Այսպիսի՝ անկասկած արատավոր վերաբերմունքի հետևանքով, Խորհրդային կարգերի գոյության շուրջ 40 տարիների ընթացքում, Հայաստանում ոչ մի անգամ չեն հրատարակվել Հովհաննես Սարկավագի, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի, Ղևոնդ Ալիշանի և բազմաթիվ այլ՝ հայ դասական հեղինակների գործերը: Էլ չեմ ասում այն մասին, որ մեր մի շարք հեղինակների ստեղծագործությունները վերոհիշյալ ժամանակամիջոցում ընդամենը մեկ անգամ հրատարակվելու բախտն են ունեցել:

Նույնը կարելի է ասել նաև գրախոսվող գրքի առթիվ: Անշուշտ Նարեկացին շատ էլ ուրախ չպիտի լիներ, եթե իմանար, որ իր պաշտած ու սրբացրած հայրենիքում, իր բանաստեղծությունների համեմատաբար ամբողջական ժողովածուն ընդամենը մեկ անգամ է հրատարակվելու բախտին արժանանալու և այն էլ բոլորովին վերջերս, ինչպես ասացինք, 1957 թվականին: Կարիք կա± ասելու, որ նման վերաբերմունքը դեպի մեր անցյալի գրական ժառանգությունը, բոլորովին էլ չի կարելի դրական համարել:

Եվ Նարեկացու՝ մինչև այժմ հայտնի բոլոր բանաստեղծությունները հրատարակության պատրաստող հանգուցյալ Արշավիր Մխիթարյանը քաջ գիտակցել է առաջին անգամ հայ ընթերցողին Նարեկացի մատուցելու գործի ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Աշխատանքին մոտենալով բացառիկ խնամքով ու զգուշությամբ, օգտագործելով մեր դասականի բազմաթիվ ձեռագրերը, զանազան տպագրությունները, ամսագրերում ու պարբերականներում տպագրված Նարեկացու հայտնի ու անհայտ բանաստեղծությունները, ժողովածուները, այս ամենի հանդեպ ցուցաբերելով միանգամայն գիտական մոտեցում, Ա. Մխիթարյանը կարողացել է պատրաստել անպայմանորեն հաջողված մի ժողովածու, ընթերցող և գիտական հասարակության համար միանգամայն անհրաժեշտ սեղանի գիրք, որն էլ, իր հերթին հստակ պատկերացում է տալիս Նարեկացու բանաստեղծական ամբողջ ժառանգության մասին:

Ժողովածուի մյուս արժանիքը պետք է համարել այն հանգամանքը, որ Ա. Մխիթարյանը Նարեկացու՝ մինչև այժմ հայտնի բոլոր հրատարակությունների մեջ

առաջին անգամ, զուգահեռաբար տվել է նաև բանաստեղծությունների աշխարհաբար թարգմանությունները: Հայտնի է, որ Նարեկացին, իր բանաստեղծությունների մեջ լեզվի խրթնության տեսակետից ոչ միայն չի զիջում «Մատյան ողբերգության» պոեմի լեզվամտածողական համակարգին, այլև որոշ դեպքերում գերազանցում է այն, որը հասկանալի է, դժվարացնում է այդ գործերի՝ ընթերցողների կողմից յուրացումը: Մխիթարյանը, տալով ժողովածուում զետեղված գործերի չափածո թարգմանությունները, խոշոր չափով օժանդակել է ընթերցողներին և Նարեկացի ուսումնասիրողներին: Իհարկե չէինք ասի, որ այդ թարգմանությունները ընդհանրապես զերծ են թերություններից. այդպիսի բան պահանջելը գրեթե անկարելի կլիներ: Բայց եղած մի քանի թերություններով հանդերձ, որոնց դեռ կանդրադառնանք, Նարեկացու բանաստեղծությունների ներկա թարգմանությունները հիմնականում կատարված են խնամքով ու բարեխղճորեն: Այստեղ չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ դասագրքերում զետեղելու առիթով կատարված մեկ-երկու թարգմանություններից բացի, մեր հեղինակի գրական ժառանգության այս մասը աշխարհաբար լեզվով չի թարգմանվել, և այս տեսակետից Ա. Մխիթարյանը հանդիսանում է տվյալ գործի պիոները: Եթե ասվածին ավելացնենք գիտակ ու հմտորեն կազմված ծանոթագրությունները, որտեղ տրված են յուրաքանչյուր բանաստեղծության գիտական պատմությունը, և ոչ պակաս հմտությամբ կազմված հատուկ անունների բառարանը, ապա գոնե ընդհանուր գծերով պարզ կդառնա այն խոշոր ու դրական աշխատանքը, որը կատարել է Ա. Մխիթարյանը Նարեկացու բանաստեղծությունները հրատարակության պատրաստելու համար:

Մի քանի խոսք ժողովածուում եղած թերությունների մասին:

Նարեկացու բանաստեղծությունները, կազմողը զետեղել է «Տաղեր» ընդհանուր խորագրի տակ և այդ մասին առաջաբանում բավականացել է նշելով միայն, որ «նրա բանաստեղծությունները միջնադարյան տերմինոլոգիայով անվանում ենք տաղեր»: Առարկության ենթակա չէ այն փաստը, որ «Տաղ» տերմինը հանդես է եկել Նարեկացուց շատ հետո, հետևաբար ինքը՝ Նարեկացին չէր կարող իր բանաստեղծություններին նման վերնագիր դնել: Հետագայի մեր բանաստեղծները իրենց ստեղծագործությունները վերնագրել են «Բան», «Տաղ» կամ «Երգ», և այդ ձևով էլ դրանք հասել են մեզ: Հիշենք թեկուզ Հովհաննես Իմաստասերի «Բան…. առ ձագն, որ կոչի սարիկ», Ֆրիկի «Տաղ Ֆրկանե ասացյալ», Կոստանդին Երզնկացու «Տաղ սիրո», կամ «Տաղ

սիրո ազնիվ», Առաքել Բաղիշեցու «Տաղ բլբուլի և վարդի», Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտին», կամ «Տաղ սիրո», Նաղաշ Հովնաթանի «Տաղ ուրախության» և այլն: Եվ որ Նարեկացին էլ իր բանաստեղծություններն անվանել է «Երգեր», գեղեցիկ կերպով երևում է հետևյալ փաստից: «Քառասնիցն» բանաստեղծությունը գրված է աքրոստիքոսի ձևով, այսինքն՝ քառյակների տողերի առաջին տառերից ստացվում է «Գրիգորի է երգս այս» նախադասությունը: Այս հանգամանքը, որն ի դեպ, նկատել է նաև պրոֆ. Մ.Մկրյանը և չի նկատել Ա. Մխիթարյանը, գոնե ժողովածուի ծանոթագրություններում այդ մասին ոչ մի խոսք չկա, կասկած չի թողնում, որ Նարեկացին իր բանաստեղծություններն անվանել է «Երգեր» և, հետևաբար, նրանց «Տաղեր» վերնագրելը հետագա գրիչների աշխատանքի արդյունքն է: Այս տեսակետից էլ, լավ չէ±ր լինի խախտել սխալ ավանդույթը և Նարեկացու բանաստեղծությունները հրատարակել իրենց իսկական՝ «Երգեր» խորագրով, առաջաբանում իհարկե նշելով այդ փոփոխության մասին, և ոչ թե անցնել այդ հարցի կողքով, դրա մասին ասելով միայն այն մեկ հատիկ նախադասությունը, որը բերվեց վերևում: Անկասկած օգտակար կլիներ առաջինը, որից է՛լ ավելի կշահեր ժողովածուն:

Ասացինք, որ Մխիթարյանը տվել է Նարեկացու բանաստեղծությունների աշխարհաբար թարգմանությունները, որն անպայման գովելի ձեռնարկում է: Սակայն այդ թարգմանությունների մեջ հաճախ աչքի են ընկնում անճշտություններ, անհաջող ձևակերպումներ և պարզապես սխալներ: Թարգմանական կարգի այդ բոլոր թերու-թյունները կարելի է բաժանել երեք խմբի:

ՍԽԱԼ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք իմաստի մթագնումներ են առաջացնում:

«Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի» թարգմանված է՝ «Ծոցի ծաղիկը հայրական», որը սխալ է, պետք է լինի «Ծոցի ծաղիկը՝ հայրենի ծոցը» /էջ 42/:

«Ըզկնի ճեմէր բարկ աստեղօք» թարգմանված է՝ «Ճեմում է հետքից վառ աստղերով», պետք է լինի «ճեմում էր վառ աստղերի հետևից» /Անդ./ :

«Ահա ելէք դուք ի յայրին», թարգմանված է «հիմա ելեք դուք դուրս այրից», պետք է լինի՝ «ահա ելեք դուք այրի մոտ», այսինքն՝ ճիշտ հակառակը /էջ 54/:

«Ընդ վիմին հովանեաւ», թարգմանված է «դեպի վեմը հով անող», որի հետ համաձայնել չի կարելի: Պետք է լինի «վեմի հովանու ներքո» /էջ 57/:

«Կերայք զիմ հացէս, և արբէք զիմ գինիս» թարգմանված է. «Կերեք իմ հացես և արբեք իմ գինով», որը ոչ միայն սխալ է, այլև չի համապատասխանում այժմյան աշխարհաբարի քերականական կանոններին: Պետք է լինի «Կերեք իմ հացից, և խմեք իմ գինուց» /Անդ./:

«Գոհար վարդն վառ առեալ». թարգմանված է. «Գոհար վարդն էր քող առել», որը բնավ ճիշտ չէ, և քողի մասին էլ ոչ մի խոսք չկա: Պիտի լինի «Գոհար վարդը վառվում էր», ինչպես ճիշտ թարգմանել էր պրոֆ. Մ. Մկրյանը /էջ 58/:

«Եվ ի վերայ նորա բեհեզք ծիրանիք», թարգմանված է «Եվ նրա վրա բեհեզ ծիրանի»: Պետք է լինի հոգնակի թվով. «Եվ նրա վրա ծիրանի բեհեզներ»: Ընդհանրապես նշենք, որ հոգնակի-եզակի խախտումները թարգմանչի մոտ ամենևին էլ հազվագյուտ չեն:

«Նա ձայն ածէր եզն ամոլին, կանչիւն առնէր աթոռակին», թարգմանված է հետևյալ ձևով. «Նա ձայնում էր ամոլ եզան և գոչում էր աթոռակին», որի հետ դժվար է համաձայնել: Հեղինակի միտքն այն է, որ ճորտն այնպես բարձրաձայն էր դիմում եզներին, որ նրա ձայնը լսվում էր սայլում գտնվող աթոռակի վրա անգամ: Ուրեմն պետք էր թարգմանել «Նա ձայն էր տալիս ամոլ եզանը, ձայնը հասնում էր աթոռակին» /էջ 64/:

«Դու ի սրբութեան սրբարան սուրբ». թարգմանված է. «Դու սրբության մեջ սրբություն սուրբ», որը գրեթե անհասկանալի է մնում ընթերցողի համար և սխալ է: Պիտի լինի «Դու սրբության մեջ սուրբ սրբարան» /էջ 68/:

«Բերկրեալդ ուրախ լեր, տեր ընդ քեզ» թարգմանված է. «Բերկրյալ եղիր, տերը քեզ հետ»: Պետք է լինի՝ «Երջանիկդ ուրախ եղիր, տերը քեզ հետ» /էջ 72/:

«Սօքո հիմնեցան եկեղեցիք ուղղափառաց», թարգմանված է. «Սրանք հիմնեցին եկեղեցի ուղղափառաց», որը սխալ է և գրաբարյան իմաստը չի արտահայտում: Պետք է լինի «Սրանցով հիմնվեցին ուղղափառների եկեղեցիները» /էջ 100/:

ԲԱԹՈՂՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԱՎԵԼՈՐԴ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ: Թարգմանելիս որոշ բանաստեղծությունների մեջ Մխիթարյանը կատարել է ոչնչով չհիմնավորված բառերի բացթողումներ, կամ երբեմն ավելացրել է բառեր, որոնց կարիքը չի զգացվում: Ահա դրանցից մի քանիսը:

«Ահա նա ձայն եղբօրորդւոյն» թարգմանված է. «Ահա ձայնն <u>ԻՄ</u> եղբորորդու», ընդգծված բառն ավելացված է, որի կարիքը չկա /էջ 53/:

«Ի համատարած ծովէն» թարգմանված է. «ԱՅԴ համատարած ծովից», որտեղ ընդգծված բառն ավելորդ է:

«Եւ ի վերայ նորա աթոռք ԵՆ կարգեալ»: Թարգմանված է. «Եվ նրա վրա աթոռներ շարված»: Բաց է թողնված «են» հանգույցը, որից նախադասության իմաստը դարձել է դժվար հասկանալի /էջ 62/:

«Եթի հարիւր բարդ խոլրձան, վեց կորնկան», թարգմանված է. «ՍԱՅԼԻՆ հարյուր բարդ խոլրձան, վեց կորնկան»: Ընդգծված բառերից առաջինը թարգմանության մեջ բաց է թողնված, իսկ երկրորդն ավելացված է, որի կարիքն ամենևին չկար /Անդ/:

«ՅՈՐԴ աղբերաց, ՀՈՅԼ վտակաց», թարգմանված է. «Աղբյուրներին, վտակներին» և բաց է թողնված ընդգծված բառերը /էջ 75/:

«Աւետիս ԾԱՌՈՑ ծաղկանց», թարգմանված է. «Ավետիս ծաղիկներին» և բաց է թողնված ընդգծված բառը /Անդ/:

«Աւետիս, յայտնեալ ԱՅՍՕՐ» թարգմանության մեջ ընդգծված բառը չկա /էջ 81/:

Եվ՝ ԲԱՌԵՐԻ ԱՆՀԱՋՈՂ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, որի հետևանքով դժվարանում է մի շարք տաղերի իմաստները հասկանալը: Ահա մեր նկատած դեպքերը:

«Ոտիցն ի գնալ, շողն ի կաթել առնոյր», թարգմանված է. «Ոտքերից գնալիս շող էր կաթկթում»: Ավելի լավ կլիներ «Գնալիս, ոտքերից շող էր կաթկթում»:

«Էն էին անէին եղանի տակ եղելի՝ անեղիցն աներբից յավիտեանս», թարգմանված է. «Աստված ինքն ինքնաստեղծ է եղել արարիչ եղած՝ չգոյից անժամանակից հավիտյան» /էջ 76/, որն ավելի անհասկանալի է, քան գրաբար տողը: Ավելի լավ կլիներ՝ «Աստված ինքն է անժամանակ հավիտյան անգոյությունից, եղած եղել իր ինքնաստեղծ արարիչը», որն ավելի հասկանալի է: Այս և ուրիշ բանաստեղծություններում շփոթությունը մեծ մասամբ առաջանում է նրանից, որ թարգմանիչը միանման չի թարգմանել «Է» հասկացությունը: Բանն այն է, որ Նարեկացին իր տաղերում «Անեղ», «Է», «Անսկիզբն անքննին» և այլ ձևերն օգտագործում է Աստծուն կոչելու համար, հետևաբար միասնականության տեսակետից այդ բոլոր ձևերը անհրաժեշտ էր թարգմանել միայն Աստված: Իսկ Մխիթարյան միաբանության ժամանակ, վերոհիշյալ ձևերը թարգմանվել են մերթ «Աստված», մերթ «Գոյ», մերթ թողել են նույնությամբ, որը և շփոթության տեղիք է տալիս:

1960 թ.